

Պետք չէ ապրել անցյալի մեջ, այլ անցյալը պետք է ապրի մեր մեջ

Սարգսյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

sargsyansuren@yandex.ru

EDN: BAKQHM

Բաժանվելով ցեղից՝ անհատը մեռնում է հոգևպես...

Գ. Նժդեհ

Երկար տարիներ հայոց մեծագույն բաղձանքը եղավ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության հենքի վրա «Մեծ երազի» աստիճանաբար իրականացումը: Իսկ ինչ ունենք այսօր: Եթե կարճ, ապա նախ հենց այդ եռամիասնությունը չկա: Քանզի վերջին տարիներին իրականացած Թավշյան ու օրվա իշխանությունների վարած անհասկանալի ու խառնաշփոթ քաղաքականությունը փոշիացրին թե՛ եռամիասնությունը, թե՛ մեր «Մեծ երազը»: Այսպես՝

ա) Հայաստանի արտաքին քաղաքականության բնագավառում անհասկանալի իրավիճակ է ստեղծվել: Դաշնակիցների անհաջող փնտրտուքի, կեղծ խոստումների ու անհետևողական պահվածքի արդյունքում անորոշ ու անհուսալի իրավիճակ ունենք:

բ) Ներքին կյանքում թեև համատարած թվային ձևախեղված հաշվարկներին, աննախադեպ ավելացել է աղքատների թիվը և պաշտոնական տվյալներով մեր հասարակության 24,8 տոկոսը կամ որ նույնն է՝ չորսից մեկը աղքատ է:

գ) Արցախը որպես քաղաքական միավոր, իրավական սուբյեկտ այլևս գոյություն չունի, քանզի ամբողջովին հայաթափված է և հանձնված թշնամու ողորմածությանը:

դ) Սփյուռքը, որին Հայրենիքի հետ կապող ու համայն հայությանը համախմբող Հայաստանյայց առաքելական եկեղեցու դեմ անհասկանալի արշավանքի արդյունքում շփոթված է ու հիասթափված:

Հենց այստեսակ իրավիճակների համար էր Համո Սահյանն ասում, որ ապրում ենք ավստասանքով, և դժվար ենք ուշքի գալիս, որ ուշացած ուշքի գալով մի ողջ կյանք ենք տանուլ տալիս, իսկ այս դեպքում վախենամ նաև՝ ամեն ինչ: Սակայն պետք չէ վախենալ, քանզի երբեք չպետք է տրվենք վախին: Իրականում այն չկա, այն գոյություն ունի միայն մեր մտքում: Հարկավոր է ուղղակի սթափվել, դուրս գալ քարոզչական ընդարմացումից, քանի որ երբ մարդ պարզապես որոշում է փոխվել դեպի լավը, ապա դա արդեն հաջողության կեսն է: Հակառակ դեպքում, քնախտով տարված մեզ թվում է, թե այս տխուր իրավիճակը մեզանից շատ հեռու է, մեզ որևէ վտանգ չի սպառնում, այնինչ ինչպես Սպարապետ Վազգեն Սարգսյանն էր ասում սրտի չափ մի երկիր ենք, սրտի ծայրամասը ո՞րն է: Որտեղից էլ վնասվի, մահացու է: Հարկավոր ազգովին ոտքի ելնել ու տեր կանգնել հայրենի աշխարհին: Հարկավոր է հետևել Նժդեհի դավանանքին, քանզի նրա Ցեղակրոնությունն այլ նպատակ չունի, քան տարագիր հայության մեջ արթնացնել ցեղը, ցեղայինը, միաժամանակ՝ թարմացնելով իր պատմական հիշողությունը՝ այն մի և անբաժան ազգի վերածելու համար: Քանզի ցեղորեն գունատված, պարտվողական, կենսաբանորեն տկարացած է օրվա հայը, որին աջ ու ձախ հարվածում են ու մնում անպատիժ:

Հասունացել է պահը, որ Աստծուն ասենք՝ էս մեկը չեղավ, նորի՛ց մարդ ստեղծիր՝ և այս անգամ մի քիչ կարգին: Գաղտնիք չի, որ այսօր հայտնի բոլոր սուրբ գրքերը պնդում են, որ մարդը արարվել է Արարչի կերպարով և նմանությամբ: Այսինքն, մարդուն տրվել է այնպիսի գեներտիկ կառուցվածք, որպեսզի նա ո՛չ միայն ունենա նմանություն Արարչի արտաքին տեսքին, այլև լինի նրա պես ազատ՝ իր ընտրության իրավունքով, սեփական կյանքը կառավարելու և հայրենի տունուտեղը սրբորեն պաշտպանելու առումով: Պատահական չի, որ քվանտային մեխանիկայի վերջին շրջանի գիտական հայտնագործությունները ևս փաստում են, որ մարդը օժտված է այնպիսի Արարչական գործությամբ, որ նույնիսկ կարող է փոփոխել իր գեներտիկ կառուցվածքը: Հետևաբար, իրեն ու իր Հայրենիքը պաշտպանել հաստատ կկարողանա, եթե հաշիշաթմբիի կամ ուղեղների լվացման հոսքագծի վրա չի:

Հոսքագիծ, որի քարոզիչները հաճախ ներարկում են, թե աշխարհն իբր հեռու չի միջուկային աղետից և նման անհեթեթություններ: Այնինչ, մարդկությունը դեպի ինքնակործանում չի գնում, իսկ այսօրվա երեւույթներից շատերն այս կամ այն ձևով կրկնվել են պատմության ընթացքում: Ուղղակի ընդամենը հարկավոր է, որ հասարակությունը հաղթահարի «երկրորդ կուրսեցու ախտանիշը» և

հանրային դաշտում որոշակի կայունություն կտիրի: Քանզի նոր աշխարհակարգի հաստատմանը, որպես կանոն, միշտ էլ նախորդում են բավականին աղետալի իրադարձություններ, որ խլում են տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքեր, պատճառ դառնում ավերածությունների: Իսկ մենք հիմա մասնակից ենք նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացին և, բնականաբար, ենթադրվում է, որ ակտիվ փուլն առավելագույն մակարդակին չի հասել, ուր մնաց թե ավարտվի: Իսկ այս դեպքում լավ կլինի, որ ցանկացած մարդ երբ մի բանից խոսում է և առավել ևս քարոզում, ապա ինքը լինի այդ գաղափարի կրողը, պայքարի հանուն այդ գաղափարի: Օրինակ՝ երբ մարդը խոսում է հայրենասիրությունից ու ինքը թողնում հեռանում է հայրենիքից, ապա անտրամաբանական է իր քարոզը: Կամ հայրենիքի պաշտպանությունից է խոսում, բայց ինքը չի գնում այդ հայրենիքը պաշտպանելու և այլն: Ավելին, երեխաներին տանում է արտասահման, դարձնում այնտեղի քաղաքացի, հետո ասում է, իմ երեխաները Հայաստանի քաղաքացի չեն, ոնց գան ծառայեն Հայաստանի բանակում: Այսինքն, ժողովուրդը եթե իր մտածողությամբ հայրենասեր չի, ապա անհիմաստ է և անտրամաբանական նրա ձևական, բաժակաճառային հայրենասիրական կոչերը, առաջարկները: Լավ կլինի խոսենք նրանից ինչի կրողն ենք:

Առաջին նախագահ Լևոնի օրոք երկիր լցվեցին աղանդները, Քոչարյանի օրոք բացվեց սորոսի գրասենյակը և լքեց-ների առաջ կանաչ լույս վառվեց, Մերժի ժամանակը թմրաբիզնեսի ծաղկման տարիներն էին, հիմա էլ այդ ամենի փունջ տեսակն է, այսինքն՝ երեքը մեկումը: Դրան ավելանում է հայր հայի նկատմամբ թարախ շնչելն ու նախանձը, որի պատճառով է, որ դարերով հողատու ազգ ենք եղել ու կանք: Պակաս կարևոր չի նաև համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացից մեր ինքնամեկուսացումը: Հենց մեր ինտելեկտուալ այդ ցածր մակարդակը, մտածողության կորուստը հավասար եղավ Արցախի կորստին: Մի կարևոր հանգամանք էլ կա. Մենք շատ ենք կապված անցյալի հետ, վախենում ենք նոր կյանք ապրելուց, մեզանում կա կարոտախտ, անցյալի պաշտամունք, մինչդեռ մենք չպետք է ապրենք անցյալի մեջ, այլ անցյալը պետք է ապրի մեր մեջ: Հավելենք նաև, որ մեր ժողովրդին պետք է ժամանակակից քաղաքային մտածողություն, և մեր արվեստը պետք է դաստիարակի քաղաքային հայրենասեր մարդու: Թե մեզ հետ ինչ տեղի ունեցավ, թե ինչու Արցախը կորցրինք հասկանալու համար ներքին ինտելեկտուալ յարում է պետք: Մենք «ջունգլիներից» պետք է դուրս գանք: Մեր ժողովրդի մեջ մեծ ներուժ, եռանդ կա, բայց անհրաժեշտ է, որ կեղծ արժեքներից ու պաթոսից ազատվենք: Այնինչ, մշակույթը, արվեստն ու կրթությունն անհատական պլանով են աշխատում: Մեզ մոտ մարդիկ իրար չեն հանդուրժում, մարդկային զգացմունքները նահանջ են ապրել, դա հոգևոր մեծ անկում է: Ամենուր նյութապաշտությունն ու շահամոլությունն են իշխում, ռաբիալ դարձել է կենսակերպ, սիրային երգ են երգում՝ զգվելը գալիս է: Ծաշակի տոսկալի անկում կա: Մերիպներն էլ սարսափելի են. այնտեղ մարդիկ անընդհատ իրար վրա գոռում են, ինչպե՛ս կարելի է այդքան պարզունակ ու էժանագին լինել:

Այս ցավոտ հարցերը կարգավորելու, շտկելու փոխարեն իշխանությունները որոշել են գիտության, կրթության, գրականության և արվեստի մարդկանց տրվող տիտղոսները վերացնել, համարելով, որ դրանք անցյալ, կոմունիստական վարչակարգից ժառանգված մնացուկներ են: Այդ նույն տրաբանությամբ առաջնորդվելով, որպես անցած կոմունիստական վարչակարգի մնացուկ, ես էլ առաջարկում եմ վերացնել՝ Օպերայի և բալետի շենքը, Մատենադարանը, Ծիծեռնակաբերդի համալիրը, Սասունցի Դավիթի, Վարդան Մամիկոնյանի, Մեսրոպ Մաշտոցի և մյուս արձանները, երկաթուղին, մետրոն, կրթական համալիրները, տուֆակերտ այն ճարտարապետական կոթողները, որտեղ նստում են Վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, Նախագահը... Մոռանալով, որ հավատքը միասնություն է տալիս՝ բոլոր եկեղեցիները, որոնք նախատեսված են, որ մեր քաղաքացիները մտնեն, մոմ վառեն, աղոթեն, ավելի լավ մարդ դառնան, ավելի լավ հայ: Դժվար պահին չհուսահատվեն, խնդրեն և օգնություն ստանան Աստծուց: Քանզի այս ծանր պատմական փուլում ևս հայ առաքելական եկեղեցին կարևորագույն դեր է կատարում ազգային միասնականության և ազգային մտածողության պահպանման հարցում:

*Содана / Հանձնվել է՝ 23.12.2024
Рецензирована / Գրախոսվել է՝ 26.12.2023
Принята / Ընդունվել է՝ 28.12.2023*